Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թվականի
դեկտեմբերի 16 -ի N 804 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՈՒ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԼՔՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ»

1.	**Ծրագրի նպատակը**	Ինչպես «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության, այնպես էլ Հայաստանյան «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական առաջնահերթություն է մանկալքության կանխարգելմանն ուղղված գործունեությունը: Այս ուղղությամբ կազմակերպությունը ծրագրեր է իրականացնում Կոտայքի մարզում, Իջևան քաղաքում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջաններում: Այս ծրագրերն ուղղված են ընտանիքների ամրապնդմանը և երեխաներին լքելու դեպքերի ռիսկայնության նվազեցմանը: Ընտանիքներին կազմակերպությունը ցուցաբերում է համապարփակ աջակցություն, նրանց սոցիալական և իրավական խնդիրների, ներընտանեկան բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման, ինչպես նաև զբաղվածության և առողջապահական հարցերում: Այս ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ, մասնավորապես՝ նրանց կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Կոտայքի մարզում և Իջևան քաղաքում ծրագիրն իրականացվում է կազմակերպության տարածքում, իսկ Երևանում՝ Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջանի թաղապետարանի շենքում: Այս ծրագրի նպատակն է՝

		1. Կոտայքի մարզում, Իջևան քաղաքում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջաններում մանկալքության դեպքերի քանակի նվազեցումը. 2. ծրագրի շահառու ծնողների մոտ ծնողավարության գիտելիքների և հմտությունների ավելացումը. 3. ծրագրի շահառու երեխաների հոգեբանական վերականգնում. 4. ծրագրի շահառու ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում. 5. ներընտանեկան միջանձնային հարաբերությունների բարելավում. 6. Արաբկիր վարչական շրջանում COVID-19 համավարակի տարածման և դրա կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ իրազեկվածության բարձրացման միջոցով, COVID-19 համավարակից տուժած լրացուցիչ 200 շահառու երեխաների և նրանց 100 շահառու ընտանքիների ամրապնդում՝ նյութական օժանդակության, համապատասխան մասնագետների ներգրավմամբ սոցալ-հոգեբանական աջակցության միջոցառումների իրականացմամբ: Դպրոցական երեխաների կրթական խնդիրների լուծման նպատակով ինտերնետի հասանելիություն ապահովող համապատասխան սարքավորումների տրամադրում և երիտասարդների մասնագիտական կողմորոշմանն ուղղված միջոցառումների իրականացում:
2.	**Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը**	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «UOU-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Ինսբրուկ, Ավստրիա)
4.	**Ծրագրի կատարողը**	Ծրագիրն իրականացնում է «UOU Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19)
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Ծրագիրն իրականացվում է Կոտայքի մարզում, Իջևան քաղաքում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջաններում, այն առնչվում է սոցիալական, իրավական և կրթական բնագավառներին:
6.	**Ծրագրի բյուջեն**	Սույն ծրագրի 1-ին կետում նշված 1-ից 5-րդ նպատակիների 01.01.2019 - 31.12.2021 թվականների իրականացման բյուջեն կազմում է **804,356,298** դրամ, իսկ 6-րդ նպատակի 01.12.2020-31.12.2021 թվականների համար (COVID-19 համավարակին վերաբերող մասվ)՝ **99,143,167** դրամ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է՝ **903,499,465** դրամ: Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «UOU-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Ինսբրուկ, Ավստրիա)
7.	**Բարեգործություն ստացողը**	Ծրագրում ընդգրկված են սոցիալական ռիսկի ենթակա **1,483** երեխաներ, **665** ընտանիքներ:

8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	Ծրագիրն իրականացվելու է 01.01.2019 - 31.12.2021 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ՝ բացառությամբ COVID-19 համավարակին վերաբերող միջոցառումների):
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	1. Կրթադաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ 3 տարվա համար կազմում է **43 ,882, 760** դրամ (որից 20,400,000 դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 1.1. դպրոցական պարագաների և գրքերի տրամադրում՝ *6,952,500* դրամ. 1.2. ուսման վարձերի վճարում, երեխաների հետ արտաժամյա պարապմունքների և նախասիրությունների խմբակների կազմակերպում՝ *20,400,000* դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում). 1.3. նյութերի տրամադրում՝ խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփան, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ *2,250,000* դրամ. 1.4. հեռավար ուսուցման նպատակով տեխնիկական և այլ միջոցների (սմարթֆոններ, պլանշետեր, ինտերնետի հասանելիություն ապահովող քարտեր և այլն) տրամադրում դպրոցահասակ երեխաներին՝ 12,480,260 դրամ: 1.5. մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստման դասընթացների կազմակերրպում և անցկացում համավարակի պատճառով աշխատանքը կորցած շահառուների, ինչպես նաև շահառու երիտասարդների համար՝ 1,800,000 դրամ: 2. Առաջնային առողջության պահպանում, COVID-19 վիրուսից պաշտպանության նպատակով պաշտպանական և ախտահանման նյութերի և պարագաների տրամադրում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ 3 տարվա համար կազմում է **99, 564, 500** դրամ (որից 52,118,500 դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 2.1. ծրագրի շահառուների համար դեղորայք, բժշկական դիմակներ, ձեռնոցներ, ախտահանիչ նյութեր (ալկոգել, անտիսեպտիկ նյութեր), բժշկական օժանդակ սարքավորումներ՝ *34,620,000* դրամ. 2.2. անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում՝ *52,118,500* դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում).

		2.3. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ *11,826,000* դրամ. 2.4 COVID-19 համավարակի հաղթահարմանը և ինքնապաշտպանությանը նպաստող տեղեկատվական-մեթոդական ուղղեցույցներ, բուկլետներ՝ 1,000,000 դրամ: 3. Ծրագրի շահառուներին նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում (սննդի և հագուստի տրամադրում) և տնտեսական կայունացման աջակցություն (աշխատանքային գործիքներ, սարքեր և սարքավորումներ աշխատանքային գործունեություն ծավալելու համար) 3 տարվա համար կազմում է **156,700,224** դրամ. 3.1. սնունդ և հագուստ՝ 73,322,880 դրամ. 3.2. աշխատանքային գործիքներ և սարքեր (աշխատանքային գործիքների ձեռքբերում՝ վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կտորեղեն և կարի այլ գործիքներ, կարի մեքենաներ, թխվածք թխելու վառարան, վարորդների համար մեքենայի սարքեր (օրինակ՝ գազի լիցքավորման գլան և այլն)՝ *74,100,000* դրամ. 3.3 Երեխաների և նորածինների համար առաջին անհրաժեշտության հագուստ և իրեր (անկողնային պարագաներ, քայլելու, կերակրման, լողանալու համար նախատեսված մանկական պարագաներ և այլն), հիգիենայի պարագաներ (մանկական խնամքի, մաքրող միջոցներ, տակդիրներ և այլն)՝ 9,277,344 դրամ. 4. Տրամադրվող տարածքի (տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված ժամանակավոր անհատույց օգտագործման տարածքներ, որոնք օգտագործվում են ծրագրերի իրականացման նպատակով) և սարքավորումների վերանորոգում, գույքի ձեռքբերում և վերանորոգում, տեխնիկական բազայի ապահովում, կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր) և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ 3 տարվա համար կազմում է **55,297,548** դրամ (որից 12,000,000 դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 4.1. տրամադրվող տարածքի վերանորոգում՝ *2,370,000* դրամ. 4.2. համակարգիչների և համակարգչային այլ տեխնիկայի ձեռքբերում և վերանորոգում *6,033,183* դրամ. 4.3. կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր)՝ *19,768,365* դրամ. 4.4. տրամադրվող տարածքի վարձավճար՝ *12,000,000* դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում). 4.5. գույքի ձեռքբերում և վերանորոգում՝ *1,500,000* դրամ. 4.6. տեխնիկական բազայի ապահովում՝ *10,440,000* դրամ.

		4.7 Հաշվապահական հաշվառման ծրագրի (ՀԾ-Ձեռնարկություն) սպասարկման ծախս 01.01.2021-31.12.2021 ժամանակաշրջանի համար՝ 3,186,000 դրամ: 5. Շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝ կլոր սեղան և շահառուների խնդիրների քննարկումներ 3 տարվա համար կազմում է **8,550,000** դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում): 6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ 3 տարվա համար կազմում է **438,854,667** դրամ (5 հոգեբան և 33 սոցաշխատող), (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 6.1. սոցիալական աշխատողներ՝ 393,711,630 դրամ՝ 33 աշխատակից. 6.2. հոգեբաններ՝ 45,143,037 դրամ՝ 5 աշխատակից. **Կազմակերպական ծախսերը 3 տարվա համար կազմում են 100,649,766 դրամ** (որից 21,03,866 դրամ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում). 1) Աշխատակազմի ծախսեր. 2) Տրանսպորտային միջոցների (հինգ մարդատար մեքենայի համար) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութ. 3) Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ. 4) Անձնակազմի ապահովագրություն. 5) Բանկային ծախսեր. 6) Ծրագրի շահառուների տունայցերի, տարբեր հանդիպումների կազմակերպման և մասնակցության համար երկու միավոր տրանսպորտային միջոցների (մարդատար ավտոմեքենաներ) ձեռքբերում արտերկրից և ներմուծում ՀՀ տարածք. 7) «ՀԾ-Ձեռնարկություն» հաշվապահական հաշվառման բազմամասնաճյուղային տարբերակով համակարգի ձեռքբերում (հետևյալ կոնֆիգուրացիաներով՝ հաշվապահություն, հիմնական միջոցներ, ապրանքանյութական արժեքներ, ավտոտնտեսություն, պատվերներ, աշխատավարձ, կադրեր) և ներդրում, ինչպես նաև ներդրման նպատակով տվյալների նախապատրաստման ծառայությունների ձեռքբերում:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	1) Գրենական պիտույքների, նյութերի և այլ պարագաների ձեռքբերում (շահառուների և գրասենյակի համար) 3 տարվա համար կազմում է **9,202,500** դրամ. 2) Ծրագրի շահառուների համար հեռավար ուսուցման տեխնիկական պարագաների՝ սմարթֆոնների, պլանշետերի, ինտերնետի հասանելիություն ապահովող քարտերի ձեռքբերում՝ ***12,480,260*** *դրամ.*

		3) Ծրագրի շահառուների համար մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստման դասընթացների գծով ծառայությունների ձեռքբերում՝ **1,800,000** դրամ. 4) Ծրագրի շահառուների համար դեղորայքի, բժշկական դիմակների, ձեռնոցների, ախտահանիչ նյութերի (ալկոգել, անտիսեպտիկ նյութեր), բժշկական օժանդակ սարքավորումների ձեռքբերում 3 տարվա համար կազմում է **34,620,000** դրամ. 5) Ծրագրի շահառուների համար իրավաբանական խորհրդատվության և աջակցության ձեռքբերում 3 տարվա համար կազմում է **11,826,000** դրամ. 6) Ծրագրի շահառուների համար COVID-19 համավարակի վերաբերյալ տեղեկատվական-մեթոդական ուղղեցույցների և բուկլետների ձեռքբերում՝ **1,000,000** դրամ. 7) Ծրագրի շահառուների համար սննդի և հագուստի ձեռքբերում 3 տարվա համար կազմում է **73,322,880** դրամ. 8) Ծրագրի շահառուների համար աշխատանքային գործիքների և սարքերի (աշխատանքային գործիքների ձեռքբերում՝ վարսահարդարման, մատնահարդարման, դիմահարդարման, ոտնահարդարման գործիքներ, կտորեղեն և կարի այլ գործիքներ, կարի մեքենաներ, թխվածք թխելու վառարան, վարորդների համար մեքենայի սարքեր (օրինակ՝ գազի լիցքավորման գլան և այլն) ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է **74,100,000** դրամ. 9) Ծրագրի շահառու հանդիսացող երեխաների և նորածինների համար հագուստ, անկողնային պարագաներ, քայլելու, կերակրման, լողանալու համար նախատեսված մանկական պարագաներ, հիգիենայի պարագաներ (մանկական խնամքի, մաքրող միջոցներ, տակդիրներ և այլն)՝ **9,277,344** դրամ. 10) Գույքի, համակարգիչների և տրամադրվող տարածքի վերանորոգում 3 տարվա համար կազմում է **3,870,000** դրամ. 11) Կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր) 3 տարվա համար կազմում է **19, 768, 365** դրամ. 12) Գույքի, համակարգիչների և տեխնիկական բազայի ձեռքբերում **16,473,183** դրամ. 13) Տրանսպորտային միջոցների (հինգ մարդատար մեքենա) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում **15,032,100** դրամ. 14) Տրանսպորտային միջոցների (հինգ մարդատար մեքենա) վառելանյութի ձեռքբերում՝ 3 տարվա համար կազմում է **7,339,800** դրամ. 15) Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ (վարչական ծախս)՝ 3 տարվա համար կազմում է **17,238,000** դրամ. 15.1. հեռախոսի վարձավճար՝ *3,834,000* դրամ. 15.2. ինտերնետի վարձավճար՝ *4,044,000* դրամ.

		15.3. գրասենյակային պարագաներ՝ *9,360,000* դրամ: 16) Ծրագրի շահառուների տունայցերի, տարբեր հանդիպումների կազմակերպման և մասնակցության համար երկու միավոր տրանսպորտային միջոցների (մարդատար ավտոմեքենաների) ձեռքբերում և ներմուծում՝ **25,000,000** դրամ: 17) «ՀԾ-Ձեռնարկություն» հաշվապահական հաշվառման բազմամասնաճյուղային համակարգի ձեռքբերում (հետևյալ կոնֆիգուրացիաներով՝ հաշվապահություն, հիմնական միջոցներ, ապրանքանյութական արժեքներ, ավտոտնտեսություն, պատվերներ, աշխատավարձ, կադրեր) և ներդրում (սերվերային մաս և 9 օգտագործման լիցենզիաներ)՝ **3, 125,500** դրամ: 18) ՀԾ-Ձեռնարկություն» հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման նպատակով տվյալների նախապատրաստման ծառայություններ՝ **200,500** դրամ: 19) «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգի սպասարկում 01.01.2021-31.12.2021 ժամանակաշրջանի համար՝ **3,186,000** դրամ:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Կազմակերպական ծախսերը 01.01.2019 – 31.12.2021 թվականների համար կազմում են **100,649,766** դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի **11.1** տոկոսը: Այդ թվում՝ 1. Աշխատակազմի ծախսերը 3 տարվա համար կազմում են **19,873,866** դրամ. 1.1. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝*10,200,000* դրամ. 1.2. հանրային ծախսեր՝ *1,500,000* դրամ. 1.3. աշխատավարձ՝ (սպասարկող անձնակազմ) *8,173,866* դրամ, 3 աշխատակից (հարկային արտոնություն չի պահանջվում): 2. Տրանսպորտային միջոցների (հինգ մարդատար մեքենա) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում և վառելանյութ՝ 3 տարվա համար կազմում է **22,371,900** դրամ. 2. 1. տրանսպորտային միջոցների (հինգ մարդատար մեքենա) նորոգում, տեխնիկական սպասարկում, շահագործում՝ *15,32,100* դրամ. 2. 2 տրանսպորտային միջոցների (հինգ մարդատար մեքենա) վառելանյութ՝ *7,339,800* դրամ: 3. Հեռահաղորդակցություն և գրասենյակային պարագաներ՝ 3 տարվա համար կազմում է **17,238,000** դրամ. 3.1. հեռախոսի վարձավճար՝ *3,834,000* դրամ. 3.2. ինտերնետի վարձավճար՝ *4,044,000* դրամ. 3.3. գրասենյակային պարագաներ՝ *9,360,000* դրամ: 4. Անձնակազմի ապահովագրությունը 3 տարվա համար կազմում է **12,300,000** (հարկային արտոնություն չի պահանջվում) դրամ: 5. Բանկային ծախսեր՝ **540,000** դրամ (հարկային արտոնություն չի պահանջվում):

		6. Ծրագրի շահառուների տունայցերի, տարբեր հանդիպումների կազմակերպման և մասնակցության համար երկու միավոր տրանսպորտային միջոցների (մարդատար ավտոմեքենաների) ձեռքբերում և ներմուծում՝ **25,000,000** դրամ: 7. «ՀԾ-Զեռնարկություն» հաշվապահական հաշվառման համակարգի ձեռքբերում և ներդրում՝ **3,326,000** դրամ: 7.1 «ՀԾ –Զեռնարկություն» համակարգի ձեռքբերման և տեղադրման (սերվերի մասը և ինը օգտագործման լիցենզիաներ) արժեքը՝ 3,125,500 դրամ: 7.2 «ՀԾ – Զեռնարկություն» համակարգի տեղադրման համար տվյալների նախապատրաստման ծառայություններ 200,500 դրամ:
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ